Օսական գործարանական մի մեծ քաղաք է եւ Ճապոնի արդիւնագործական ամենայայտնի կենտրոններից մէկը: Դրան վկայ՝ քաղաքի գլխին ցցւած անհամար ծխնելոյզների բազմութիւնը:

Կայարաններում բուֆետ չկայ. գնացքներն էլ զուրկ են ճաշարան-վագօնից, այնպէս որ պէտք է քաղցած մնայինք, եթէ նախապէս հետներս ուտելիք վերցրած չը լինէինք, հետեւելով բարի մարդկանց խորհուրդին:

Ճապոնացիք իրանց ուտելիքը գնում են կայարանի հարթակի վրա ձեռքի ծախողներից, մեծ մասով եփած բրինձ կամ ձուկ, որ դրած է լինում փայտէ բարակ շերտերից շինած փոքրիկ ու սիրուն տփերի մէջ, հետն էլ երկու նուրբ փայտիկ՝ բրինձ ուտելու համար:

Հարթակի վրա կարելի է գնել նաեւ թէյ, որ ծախում են ամանն էլ հետը: Վաճառողը մի ձեռքում բռնած ունի ահագին լիքը թէյի ամանը, իսկ միւս ձեռքում տախտակի վրա շարած մանրիկ սիրուն թէյամանները, որոնց մէջ, ծախելիս, ածում է թէյը, ծածկում սիրուն գաւաթիկով ու հրամցնում է ձեզ: Այդ բոլոր պատմութիւնը արժէ 3 կոպէկ, ամանները հետը հաշւած: Յաջորդ կայարանում դուք կարող էք ձեր դատարկ թէյամանը փոխանակել մի լեցունի հետ, 1 կոպէկ վերադիր վճարով:

Թէյից ոչ պակաս վաճառւում է սառուցը: Ճապոնացիք առնում են ու դնում իրանց բաժակի ջրի մէջ եւ ջուրը խմելուց յետոյ այնպէս ախորժակով կրծում են սառուցը պակսիմատի պէս, որ մարդ ակամայ նախանձում է նրանց ատամներին:

Այդ ձեռքին ծախողները բազմաթիւ են, վազ են տալիս հարթակի երկայնքով, մէկը միւսից առաջը կտրելով, գլուխները ներս են կոխում վագօնի պատուհանից, կանչելով